Գործարքի կոդ: 609-20150708-37-389905
Գործարքի ծածկագիր: E7QE2E

# ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ՝ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 5/2015

Հայաստանի Հանրապետություն Սյունիքի մարզ քաղաք Կապան

Երկու հազար տասնհինգ թվականի հուլիսի ութին

ՀՀ քաղաքացի ՎԱԼԵՆՏԻՆԱ ԳԵՏԵՌՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ, ծնված՝ 15/07/1941թ., անձնագիր՝ 001737055, տրված 005-ի կողմից, տրման ամսաթիվը՝ 19/02/2014, հաշվառված ք. Կապան Հ. Ավետիսյան փ. 2 շ. 36 բնակարանում, այսուհետև ,,ՎԱՐՁԱՏՈՒ,, և «ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ, այսուհետև ,,ՎԱՐՁԱԿԱԼ,,, իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանման հիմնարկի հաշվառման վկայական՝ 01Բ 001700, տրված 17/03/2005թ. ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրից, ներդիր 002, տրված 07/08/2008թ. ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրից, ի դեմս աշխատակազմի ղեկավար՝ ԿԱՐԵՆ ԱՇՈՏԻ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻ, ով գործում է կանոնադրության հիման վրա, որի անունից 02/07/2015թ. տրված N 28 լիազորագրով հանդես է գալիս ՀՀ քաղաքացի ԱՆԴՐԱՆԻԿ ԳԱՐԵԳԻՆԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԸ, ծնված՝ 13/01/1963թ., անձնագիր՝ AM0375971, տրված 041-ի կողմից, տրման ամսաթիվը՝ 14/07/2011, հաշվառված ք. Կապան Հ. Ավետիսյան փ. 12 շ. 20 բնակարանում, կնքում են սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## I ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.Սույն պայմանագրով ,,Վարձատուն'' պարտավորվում է վճարի դիմաց ,,Վարձակալի'' ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել Սյունիքի մարզի Կապան համայնքի Մելիք Ստեփանյան փողոցի 6 /վեց/ հասցեում գտնվող շենքի երրորդ հարկից 34,7 /երեսունչորս ամբողջ յոթ/ ք. մ. մակերեսով տարածքն, իր կանոնադրությամբ նախատեսված գործունեություն իրականացնելու նպատակով:

Ողջ անշարժ գույքը բաղկացած է 1535,9 ք.մ. մակերեսից և վարձակալության իրավունքով զբաղեցնում է 0,24 հա բնակավայրերի նշանակության հողամաս:

2.Նշված անշարժ գույքը սեփականության իրավունքով պատկանում է ,,Վարձատուին,, 18/06/2012թ. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի ,,Կապան,, սպասարկման գրասենյակից տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականով՝ N ՄՏ-18062012-09-0063:

3.Նշված գույքը պայմանագրի ձևակերպման պահին չի օտարվել, համաձայն 17/06/2015թ. ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի ,,Կապան,, սպասարկման գրասենյակից տրված N ՄՏ-17062015-09-0276 անշարժ գույքի միավորի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանքի, ,,ՎՏԲ-Հայաստան Բանկ,, ՓԲԸ-ի կողմից ծանրաբեռնված է գրավով: Գրավով ծանրաբեռնված տարածքի վարձակալության տրամադրման համար առկա է գրավառուի՝ ,,ՎՏԲ-Հայաստան Բանկ,, ՓԲԸ-ի 01/07/2015թ. տրված N Գ-189 թույլտվությունը, համաձայն որի ,,Վարձակալը,, պարտավորվում է ,,ՎՏԲ-Հայաստան Բանկ,, ՓԲԸ-ի կողմից առաջին իսկ պահանջի դեպքում ազատել վարձակալված տարածքը՝ լուծելով Վարձակալության պայմանագիրը, միաժամանակ պահպանելով անշարժ գույքի նկատմամբ Բանկի գրավի իրավունքը:

4.Սույն պայմանագրից բխող իրավունքները և պարտականությունները տարածվում են կողմերի վրա սկսած սույն թվականի օգոստոսի մեկից մինչև երկու հազար տասնութ թվականի օգոստոսի մեկը:

5.Կողմերի համաձայնությամբ տարածքի ամսական վարձավճարը կազմում է 45,000 /քառասունհինգ հազար/ դրամ, որի մեջ ներառվում են նաև հարկային պարտավորությունները, որը ենթակա է վճարման մինչև յուրաքանչյուր հաջորդ ամսվա տասնհինգը:

6.Կողմերի համաձայնությամբ սույն պայմանագիրը կարող է դադարեցվել ժամկետից շուտ:

7.Պայմանագրի տևողության ընթացքում վարձավճարի սակագները և ժամկետը փոփոխման ենթակա են կողմերի համաձայնությամբ:

## II ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վարձատուն իրավունք ունի՝

1.Վարձակալից պահանջել գույքն օգտագործելու սույն պայմանագրի պայմաններին համապատասխան:

2.Պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները, եթե Վարձակալը Գույքից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ Գույքի նշանակությանն անհամապատասխան:

Վարձատուն պարտավոր է՝

3.Գույքը Վարձակալին տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և Գույքի նշանակությանը համապատասխանող վիճակում:

4.Վարձակալին նախազգուշացնել Գույքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների մասին:

Վարձակալն իրավունք ունի՝

5.Պահանջել Վարձատուից սույն պայմանագրի կնքման պահից իրեն հանձնել Գույքը (փոխանցման ակտով):

Վարձակալը պարտավոր է՝

6.Ժամանակին վճարել գույքն օգտագործելու համար նախատեսված վճարը (վարձավճարը):

7.Պայմանագիրը կարող է լուծվել վարձատուի պահանջով, եթե պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո երկու անգամից ավելի չի մուծվել վարձավճարը:

8.Պայմանագիրը դադարելու դեպքում Վարձատուին վերադարձնել Գույքն իր կողմից ստացված վիճակում՝ հաշվի առնելով դրա բնական մաշվածությունը:

9.Իր մեղքով վարձակալած գույքին հասցված վնասը վերականգնել սեփական միջոցներով:

10.Ապահովել իր զբաղեցրած գույքին (տարածքին և շինությանը) հարող ընդհանուր օգտագործման տարածքի հակահրդեհային, սանիտարական պատշաճ վիճակը և ճարտարապետական տեսքը:

11.Վարձակալն իրավունք ունի տարածքը հանձնել ենթավարձակալության միայն Վարձատուի համաձայնությամբ:

## III ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Վարձակալության ժամանակահատվածում կոմունալ վճարումները (էլ. էներգիա, ջրամատակարարում, գազ, աղբահանություն և այլն) կատարվելու են ,,Վարձատուի,, կողմից: Գույքահարկի վճարումը կատարվելու է ,,Վարձատուի,, կողմից:

2.Սեփականության իրավունքի փոխանցումը այլ անձի հիմք չէ վարձակալության պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու համար:

3.Պայմանագրի գործողության ընթացքում առաջացած վեճերը կարգավորվում են համաձայն գործող ՀՀ օրենսդրությանը:

4.Սույն պայմանագրի ձևակերպման հետ կապված ծախսերը կատարվում է ,ՎԱՐՁԱՏՈՒԻ,, կողմից:

5.Պայմանագիրը կնքված է համարվում կողմերի ստորագրման պահից և իրավական ուժ է ստանում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

6.Պայմանագիրը կազմված է 4 /չորս/ օրինակից, որից մեկ օրինակը պահվում է ԿԱՊԱՆ նոտարական տարածքում, իսկ մյուսները տրվում են կողմերին: Օրինակների միջև հակասությունների դեպքում նախապատվությունը տրվում է նոտարի մոտ պահվող օրինակին:

7.Սույն պայմանագրից ծագող իրավունքները 30-օրյա ժամկետում ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումում:

,,ՎԱՐՁԱՏՈՒ,,

Վ. Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

,,ՎԱՐՁԱԿԱԼ,,

«ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԿՀ,

ի դեմս աշխատակազմի ղեկավար՝ Կ. Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻ լիազորված անձ՝

Երկու հազար տասնհինգ թվականի հուլիսի ութին

Սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ Կապան նոտարական տարածքի նոտար ՎԻԵՆՆԱ ԿԱՄՈՅԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՍ կողմից: Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրը ստորագրած անձանց ինքնությունը, նրանց գործունակությունը, ինչպես նաև իրավաբանական անձի իրավունակությունը, նրա ներկայացուցչի լիազորությունները և անշարժ գույքի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքները ստուգված են: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 611 հոդվածի համաձայն սույն պայմանագրից բխող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Գրանցված է սեղանամատյանում 2320

Գանձված է պետական տուրք 5000 դրամ և ծառայության վճար 12000 դրամ համաձայն ՀՀ «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների:

Նոտար՝ Վիեննա Հայրապետյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՎԿԱՅԱԿԱՆ

## *ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ*

Սույն վկայականով հաստատվում է «18» Հուլիսի 2015 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

### *1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)*

«ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

### *2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ*

Մարզ Սյունիք, համայնք Կապան Մելիք Ստեփանյան փողոց 6 շենք

### *3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ*

Անշարժ գույքի՝ վարձակալության պայմանագիր 08/07/2015թ. ս/մ 2320

### *4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ*

Կադաստրային ծածկագիրը՝

Մակերեսի չափը (հա)՝

Նպատակային նշանակությունը՝

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝

Գրանցված իրավունքի տեսակը՝

## *5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ*

1) Նպատակային նշանակությունը՝ Հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/հ | Կադաստրային ծածկագիրը | Տեսակը | Մակերեսի չափը | Գրանցված իրավունքի տեսակը |
|---|---|---|---|---|
| 1 | **09-001-0617-0003-001-000** | **Տարածք** | **34.7 ք.մ.** | **ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ** |

### *Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ*

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Անդրանիկ Աթայան

զբաղեցրած պաշտոնը՝ Սյունիքի մարզային ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր

Կ.Տ.